ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4566-Ա « 17 » սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 2723-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ա. կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի ա. և դ. կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ և 53-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 31-րդ կետի 2-րդ ենթակետի ա. պարբերությամբ, 33-րդ կետի 4-րդ ենթակետով, 34-րդ, 35-րդ և 37-րդ կետերով՝

1. Ստեղծել Երևան քաղաքի տարահանման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) Ղեկավար կազմ՝

ա. հանձնաժողովի նախագահ՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ,

բ. հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.2-42),

գ. հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ (համաձայնությամբ),

դ. հանձնաժողովի քարտուղար՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-68),

2) Հանձնաժողովի անդամներ՝

ա. ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության հսկողության վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ),

բ. ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ),

գ. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության կազմակերպման վարչության ծառայության կազմակերպման բաժնի պետ (համաձայնությամբ),

դ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-41),

ե. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը 1.3-79),

զ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-80),

է. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-55),

ը. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-86),

թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-87),

ժ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-50),

ժա. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-73),

ժբ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-82),

ժգ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-71),

ժդ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-52),

ժե. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-18),

ժզ. Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

ժէ. Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

ժը. Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

ժթ. Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

ի. Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

իա. Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

իբ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

իգ. Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ ,

իդ. Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

իե. Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

իզ. Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ,

իէ. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ

3) Հանձնաժողովին աջակցող խումբ՝

ա. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 2.1-5),

բ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-69),

գ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-67),

դ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 1.3-56),

ե. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-76),

զ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3.-7),

է. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-88),

ը. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետի տեղակալ (պաշտոնի անձնագրի ծածկագիրը՝ 1.3-75),

2. Երևան քաղաքի տարահանման հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում մշակել և Երևանի քաղաքապետի հաստատմանը ներկայացնել Երևան քաղաքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանը:

3. Վարչական շրջանների ղեկավարներին՝

1) սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում ստեղծել վարչական շրջանի տարահանման խմբեր.

2) վարչական շրջանի տարահանման խմբերի գործունեությունն իրականացնել սույն որոշման 2-րդ կետով հաստատված պլանով:

4. Առաջարկել Երևան քաղաքի կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծել կազմակերպության տարահանման խմբեր, կամ նշանակել պատասխանատուներ, գործունեությունը իրականացնել սույն որոշման 2-րդ կետով հաստատված պլանով:

5. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2015 թվականի սեպտեմբերի 1-ի «Երևան քաղաքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանը հաստատելու մասին» № 2723-Ա որոշումը:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ